

# Փ Ո Ւ Ն Ձ

## Օ Ր Ա Գ Ի Ր

Սմեն օր կհրատարակուի : — Հատը 40 փարայ է : — Պոլիս բաժանորդ ըլլալ ուզողը մէկ արծաթ Մէճիտ պիտի վճարէ 400 թուոց համար իսկ գաւառաց մէջ 25 դրչ, դարձեալ 100 թուոց համար, թղթատարութեան ծախքէ ազատ ըլլալով : — Ծանուցման տողը 40 փարայ է մէկ անգամի համար : — Լրագրի վերաբերեալ նամակ եւ ուրիշ որ եւ է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէնն ի Ղալաթիա Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ փարի դրանը կից Նոր Գրատունը :

### Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Հեռեւեալ գիրը՝ որ Պատրիարքարան զրկուեր է, մեզ ալ զրկուած ըլլալով կհրատարակեմք, յորում ընթերցողը պիտի աեսնէ թէ մէկ անձ մը ինչպէս կյաջողի մեծ վիճակ մը վերիվայր լնելու :

« Մարդուանցի Տիվրիկի օղլու Յովհաննէս անուն անձ մը ասկէց երբ վեց եօթը տարի յառաջ Ս. Երուսաղէմ կերթաց, և հոն ժամանակ մը կենալէ ետքը կը առնայ իւր հայրենիք ի Մարդուան : ու ես ւուազ սարկուազ եմ ըսելով նոյն պաշտօնը կվարէ, Ս. Եկեղեցւոյ մէջ ուրար զգեներով և մինչեւ անդամ վերաբերում ընել յանդրգներով :

Եւ սոյն ատեն երբ յիշեալ Յովհաննէսէ նախորդ առաջնորդ սրբազանի կողմանէ վկայական կհարցուի՝ իսրեպատիկ պատճառներ յառաջ կրերք վկայական չունենալուն, որով առաջնորդ սրբազանը՝ ժողովրդ ոյ իսղաղութիւն պահելու, և երկպառակութեան պատճառ չտարու համար, առանց պաշտօնէ գաղթեցունելու, կ'ստիպուի Ս. Երուսաղէմ գրել, որ

կից պատասխան կընդունի որ՝ չէթէ սարկուազութեան, այլ մէկ աստիճան անդամ Ս. Երուսաղէմէ չտրուելէ իզատ եր սրիկայ և լիբբ վարուցը, և դանադան դատապարտութեան արժանի ընթացիցը պատճառաւ Ս. Երուսաղէմէն խայտառակութեամբ վաճառուած մէկ մ'է. ( և առաւել քան զայս հիմա ալ կրնաք ասուգել Երուսաղէմու տունէն ) : Յիշեալ անուղղաց Տիվրիկի լիեանը՝ Երուսաղէմէն այսպէս նամակ եկած և իւր խաբերայութիւնը ու խայտառակութիւնը յայտնուած ըլլալը լսածին պէս խնայն Մարդուանէն կանցայտանայ : Եւ նախարդ տարույ վերջերը յիշեալ Տիվրիկիլեան Յովհաննէսը թէպէտ որս անուամբ իրբև վարդապետ մեզի կնտրկայանայ Մանճըլլիի վանքը Սրապիոն եպիսկոպոսէ ձեռնադրուած ձեանալով, որոյ վկայանի ոչ գիրը և ոչ ստորագրութիւնը Սրապիոն եպիսկոպոսի չըլլալը հարցուցինէ, իր փոքրաւորին գիրն է, և ինքը երբէք ստորագրութիւն դընելու սովորութիւն չունի պատասխանեց : Արդ այս Տիվրիկիլեանը հիմայ հաս քար գայթակղութեան եղած է, և թէ ինչ միջոցով, պատմութեանս

չարունակութենէ յառաջ միջոցը յի-  
 շեցնեմք : Անշուշտ կ'իշէք Մարդուան-  
 ցի վերադարձ եղբարց Պատրիարքա-  
 րանէն օրհնութեան կոնդակ խնդրե-  
 լու համար նոյն եղբարցմէ նախարգ-  
 աարուց սեպտ . անայն մէջ առ Պատ-  
 րիարքարան ուզողամ տեղեկագիրքը ,  
 որով համառօտակի կիմայնեն ընտա-  
 նի հարտահարութենէ խուսափել-  
 նին , և նոյն ընտանի բռնաձիգներու  
 անխոհեմ աղբեցութիւնը մեր միջո-  
 ցով պակտիրտաններով վերստին ի գիրկ  
 հայրենի Ս . Եկեղեցւոյ գիմեքնին : Թէ  
 Պօլսոյց , և թէ գաւառաց մէջ շատ  
 անգամ փորձով անհնուած է , այսպի-  
 սի անխոհեմ և վրասակտը ազգեցու-  
 թիւնը պակտեցնող միջոցը խախտե-  
 լու համար ճշող բռնակալներ : Ա-  
 հտասիկ սոյն բռնաձգութեան ե-  
 ռանդով մտելու անձինքը եղած են հի-  
 մայ գործիք և միջոց Տիվրիկեանի որ-  
 նաւս նոցա պետական միջոցով եղած  
 է քար գայթակցութեան : Քանզի երբ  
 Տիվրիկիւնանը ( ինչչէս վերը ըսինք )  
 ինձի կնիքիցանայ , և վիսյականը ին-  
 ծի կատկածելի կ'իծուի , և մանաւանդ  
 գուցէ Մարզուանու ըրածին այն Սը-  
 րապիան եպիսկոպոսին ալ ( որունինչ  
 ստոխձանի խեղճ ըլլալուն դուք ևս  
 ծանօթ էք ) աւագ ասրիտադ եմ ը-  
 սելով խարերայութեամբ վարդապետ  
 ձեռնադրուած ըլլալը կատկածերուի-  
 կառաջարկեմ իրեն որ գայ վանքը  
 նստի , առանց վեղար և փիլոն առնե-  
 լու . մինչև իր աւագ ասրիտադ և  
 վարդապետ ձեռնադրուած ըլլալուն  
 աներկիցայ վիսյադ իրք բերել ապ ըտ-  
 րէր խոստանն : Այս առարկութեանս  
 վրայ երէք շարաթի շախ նոր սիմա-  
 փեալ Մարզուանը ձեռնայ տակէ յու-

ղելէն ետքը , կուգայ վանքը կնասի  
 տանն օրի շախ , և ապա յանկարծ  
 վանքէն կերթայ դարձեալ ի Մար-  
 զուան , և հոն բռնաձիգներու հրա-  
 պուրանօք , մանաւանդ աղմուկ հա-  
 նելու գիտմամբ կիբակի օր մը վեղար  
 փիլոնով Ս . Եկեղեցի կերթայ և կհա-  
 զրդուի ժամարար քահանայէն ա-  
 ռանց խոստովանելու , և այնուհետև  
 կչարունակէ վեղար փիլոնով աւտու-  
 երիկան Ս . Եկեղեցի երթալու յան-  
 դըղնութիւնը : Աւագ քահանայի մի-  
 շոցով կյսեմ այս անկանստութիւնը ,  
 ու անմիջապէս կերթամ ի Մարզուան,  
 և այս գայթակցութիւնը բառնալու  
 միջոցը կ'աղհիմ , սակայն կտեսնեմ  
 որ վասնզը մեծ է , քանզի ո՛վ որ ա-  
 նոր վեղարը գլխէն և փիլոնը վրայէն  
 առնելու մտենայ . . . որով Ս . Եկե-  
 ղեցին պիտի ըլլայ պատերազմի առ-  
 պարէզ : Վասնորոյ հարկագրեցոյց սոյն  
 բազմարդայթ եղելութիւնը կրկնախէ  
 հեռագրութեամբ հաղորդել Պատ-  
 րիարքարանդ , և Սեփակոյ միւթէ-  
 սարրըթին , յոյմէ անմիջապէս առ-  
 սիկ հրահանագիր մը եկու . անդոցս  
 գայմադ ամին : Ս . Ծննդեան խթումի  
 երեկոյնի գայմադամը գապթիչէյսով  
 մը կը կանչէ յիշեալ Տիվրիկիւնանը  
 ի բանս , հետևեալ օրը Պեմստիա  
 խրիկելու համար : նոյն ժաման անմի-  
 շապէս Տօբնաձեան Յակոբ աղայն կը  
 խրիկեմ գայմադամին խնդրելով , որ  
 ասանկ հրաշալի օրը բանաը չմնայ ,  
 այլ խրիկուի վանքը . կընդունի մեր  
 խնդիրը գայմադամը . սակայն ի՞նչ հա-  
 տանի կրով քապաքն երկրորդ Նիկոյր  
 այս է իրք և ամնձարձակ Էրկրիկի-  
 եանը , վանք երթալ չհանկր . Ժանա-  
 րօքս կ'իմէ պնդելով , որպէս զի տու-

գաւարի օրը վարդապետը առնելի  
բանար պառկեցաւ ըսել տալով, սեր-  
մանած աղբուկը ուռեցնէ, ինչպէս  
որ անանկ ալ եղաւ շնորհիւ իւրայնոց,  
որոց պարագլուխ են Պէնէհանեան  
Մ. Յակոբ և Ղազանձիեան Մ. Գրիգորը  
Հեռակեալ օրը կիրակի թմախա, և  
հոն բռնաձիւներուն փուշտիպան և  
Տիվրիկիեանի պաշտպան, ևս և վստմ  
մութասարըրճին քով ազդեցութիւն  
ունեցող Մալաթիացի աշարճի գինե-  
մալ Գրիգոր ( աղան ) և որոց վաճառա-  
կից հաճի ֆեթրաք անուն յոյն անձ  
մը, որ սա ևս ինչպէս յիշեալ գինե-  
մալ Գրիգորին նոյնպէս և Սեմախոյ տե-  
ղական կառավարութեան անդամոց  
ոմանց հետ մտերմական յարաբերու-  
թիւն ունենալով կարչտպանեն ըզ-  
Տիվրիկիեան, և քանի մը օրէն վստմ  
մութասարըրճի հրամանադրով կվե-  
րադարձեն ի Մարզուան զնոյն Տիվ-  
րիկեան փառճք և պատուով։ Արդ՝  
յիշեալ Տիվրիկիեանը հիմայ նստած  
է ի Մարզուան. սակայն՝ Մարզուա-  
նու ամեն թաղերը գիշերային ժո-  
ղովներու տարարէղը կընդարձակի.  
երկզառակութիւնը և յուզմունք կը  
ստատկանան օր քան զօր, և ի վերջոյ  
պիտի փայլի ազգայնոց տունը պարտ  
հորը, այնպիսի հոր, որ չըսեմ ան-  
մարելի, այլ մեծամեծ փնաններով  
գ ժուարանարելի։

Այս բաղմամբանց և ազետարեր  
եղելութիւնը ասորադրոյն է եղեա-  
եանը, որ իւրաքանչիւր բառին պա-  
տասխանատու ըլլալ կարողանալով,  
ասեմ, անպարտ եմ եւս ի չարեաց որք  
հանց երձեալ են դալ ի վերայ քաղա-  
քիս յերեաց երկրորդ նիկոյի, Տիվ-  
րիկիեանի իրր վարդապետի, և մը-


նամ ազգային վարչութեան վաղ ընդ  
փոյթ անօրինութեանը ակնկալու։  
31 յունվար 1860  
Ի Ս. վանա

Ազգային Պատրիարքարանի կող-  
մէ հեռակեալ տեղեկութիւնը յուզար-  
կուած է մեզ ի հրատարակութիւն։  
ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Այս անդամ Մուշէն Պատրիար-  
քարանս հեռազիր մը հասած է, որ  
կիմայնէ թէ Մշոյ Ս. Յովհաննու վա-  
նուց կողպտեալ ինչքերէն եօթը հաս-  
խաչ, մէկ բուրվառ, և հարիւր աը-  
րամի չափ արծաթեղէն Մշոյ դաշտը  
գանուած թիլ գիւղի կողմերը ձեռք  
բերուեր են, կայնոց կուսակալու-  
թեան կողմէ այս ինքրոյն համար  
կազմուած յանձնաժողովին ջանա-  
գրութեանց շնորհիւ, որոց անդամ-  
ներն են, Չրպարի կառավարիչ Յո-  
ման պէյ, կառավարչի փոխանորդ  
Տէտէ պէյ, և կարնոց կառավարու-  
թեան ժողովոյ անդամ Դանիէլ էֆէն-  
աի։

Իսկ առաջադէտերը ձերբակալելու  
և մնացորդ գոյքերը երևան հանելու  
համար թիզանի մէջ յատուկ դործա-  
կալներ սահմանուեր են, որոց պաշ-  
տօնին յաջալութեանը մասին մեծ յոյս  
կը յայանէ նոյն հեռազիրը։  
11 մարտ 1869

Ի Պատր. Հայոց Կ. Պոլիս



ԽՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Քարպանի տօնին առթիւ ու-  
սականութեան բանտէն ինքըն բան-  
տարկեալք երաշխաւոր տալով կրնոց

ընտանեաց քով դատնալու արտօնու-  
թիւն ստացեր են :

— Երկու շաբթի երեկոցեան փո-  
թորկին պատճառաւ շատ մը հեռա-  
գրական դժեր աւրուած ըլլալով, հե-  
ռագրական տեսչութիւնը պէտք է  
զամ միջոցները ձեռք առած է անոնց  
նորոգութեան համար :

— Զանաք — քայէէն եկած հեռա-  
գիր մը կիմոցնէ որ թալիա չող ենաւուն  
նաւապետը դուշակելով անցեալ օր-  
ուան փոթորիկը՝ խոհեմութիւն սե-  
պեր է դուրս չելլել : Այս նաւուն մէջ  
էր Պազաասի կուսակալ Միթհաթ  
փաշա՝ որ կիւրակէ օրը ճամբայ ելած  
էր :

— Մայրաքաղաքիս լա թիւրքի լը-  
րագրին ըսածին համեմատ, երկու-  
շաբթի երեկոց Գատրգիւղի վերջին  
չողենաւը Սարայ — սուրնուէն անց-  
նելով նաւապետը կիսինաց փոթոր-  
կէն և դէպի Իսկիւտար կուղէ նա-  
ւը : Այս նաւամատոյցը կեցած է եղեր  
Իսկիւտարու մէկ շողենաւը, որուն  
քով երբ կուղէ մօտենալ Գատրգիւ-  
ղի շողենաւը, առաջինին դործա-  
կայները թող չեն տար սո վերջինին  
մօտենալ, որ կատիպուի Գատրգիւ-  
ղի շողենաւուն նաւապետը Քուզ-  
կունձուք հանել իւր ճամբորդները,  
որոնք Իսկիւտար գառնալով ձի կամ  
կառք կվարձեն իրենց ընտանեաց քով  
վերադառնալու համար. ստոյգ չգիտ-  
ցուիր սակաւին թէ արդեօք Ֆեվա-  
յիտի օսմանիէ բողբջնց Շիրքէթը  
Խայրիէյի սնօրէնին՝ այս բանին հա-  
մար, որպէս զի խաաիւ պատժուին  
այն դործակալները, որոնք այսպիսի  
եղբերնի դործ մը կատարելու յան-  
դրդնեցան :

— Պիլէճիկի մէջ հրդեհ պատահե-  
լով, հակառակ ամեն ջանից՝ ԶԶի չափ  
տուներ այրելէն յետոյ մարեր է :

— Մասրիտէն լուր կուտան թէ  
զորածողովի նկատմամբ խել մը յայ-  
տարարութիւններ եղած են, բայց  
անկարգութիւն մը չէ պատահած :


— Փարիզէն լուր կուտան թէ կոյս-  
րը անցեալ երեքշաբթի օրը Եղիւս-  
եան դաշար պարաներ է :

— Կըսուի թէ Պոլքէշէն արսաք-  
սուող բունիպայիին 3000 Քրանք սըր-  
ուեր է ի փոխարէն իւր հնաւույ :

— Լոնտոնի մէջ 3 միլիոն 130 հա-  
զար հօգի, 100,778 տուն, և ամէն մէկ  
տան մէջ 7—8 բնակիչ գտնուիլը պաշ-  
տօնական վիճակագրութիւններէ ի-  
մացուած է :

— Սմերիկացի բնիկ բնակչաց թի-  
ւը օր օրի կպակսի, իսկ իրլանտացի  
և դերմանացի դաղթականք կաւել-  
նան եղեր :

— Սպանիոյ գահակորոյս իզագիւ-  
լա թագուհին իւր բնակութիւնը բո-  
լորովին Փարիզի մէջ հաստատուել է,  
երեւելի պալատ մը ծախու առնելով  
և զարդարելով :



Միւ պահեաճեան մեծ. Մանուկ ա-  
զան Գամպուր — խանի սենեակը ձգած  
ըլլալով, այսուհետև միշտ Մեծ նոր  
խանի սենեակը կգանուի, որ է միջին  
յարկ թիւ 45 :

— Բինկեան գիւղի մետաքսի հուն-  
տի ազէկ տեսակէն կգանուի Պազէ  
գափու մաքսատան գիմոց թիւ 30  
բինկեանցի 8. Յակորեանց Ազեկանդր  
ազպէն խանութը :

ՏԵՕՐԷՆ ԵՒ ՏԷՐՆ  
Հ. Ռ. ԱԼԱՃԱՅԵԱ

ՏՏՏԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ԲԻՒՐՅԱՆ